ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ. Հաղորդում է մեր սեփական թղթակիցը

Երեկ երեկոյան տասնյակ հազարավոր արցախցիներ էին հավաքվել Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում: Այստեղ տեղի ունեցավ արտոնված միտինգ: Այն ընթացավ մեկ նշանաբանով՝ լինել ողջախոհ և զգոն, հակահարված տալ այն տարրերի պրովոկացիոն գործողություններին, որոնք ամեն կերպ ձգտում են ձախողել Ազգությունների խորհրդի հանձնաժողովի աշխատանքը, որն այստեղ է ժամանել ԼՂԻՄ-ի պրոբլեմի դեմոկրատական քննարկման նպատակով:

Միտինգում ելույթ ունեցան կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վ. Աթաջանյանը, Հայոց ազգային ճակատի «Միացում» կազմակերպության նախագահ Ռ. Քոչարյանը, «Ամարաս» գթության ընկերության վարչության նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բ. Դադամյանը, դոցենտ Հ. Գրիգորյանը և ուրիշներ:

Միտինգի մասնակիցները հայտնեցին իրենց միասնությունը և հավաստիացրին, որ ամեն ինչ կանեն ապահովելու հանձնաժողովի նորմալ աշխատանքը:

Միտինգը գտավ ոչ ճիշտ տպարանի կոլեկտիվի աշխատողների գործադուլը:

***

ԼՂԻՄ-ում գտնվող ԽՍՀՄ ՆԳ մինիստրության ստորաբաժանումները վերջին մի քանի օրում որոշ չափով թուլացրել են լարվածությունը, սակայն առանձին սև ուժեր շարունակում են իրենց պրովոկացիոն գործողությունները: Դեռևս խափանված է մնում տրանսպորտային կապը Ստեփանակերտի ու հարևան շրջանների, ինչպես նաև Հայաստանի հետ: Ադրբեջանական կառավարությունը, քամահրելով ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կարծիքը, միանգամայն անհայտ նպատակներով ՆԳ աշխատողների մեծ խմբեր է կուտակել ադրբեջանական գյուղերում:

Մարզկենտրոնի շուկան լրիվ դատարկ է, թեև տնտեսություններում կա միրգ և բանջարեղեն: Դրա հիմնական պատճառը ճանապարհների շրջափակված լինելն է: Նորմալ են աշխատում հացի, մսի, կաթնամթերքների գործարանները, մթերային խանութները:

***

Այսօր առավոտյան ստեփանակերտցիներին զարմանք պատճառեց այն փաստը, որ քաղաքի փողոցներից և հրապարակներից դուրս էր բերված զինվորական տեխնիկան: Այստեղ գտնում են, որ դա կապված է Ազգությունների խորհրդի հանձնաժողովի ժամանման հետ:

Այսօր մեկշաբաթյա գործադուլից հետո սկսեցին աշխատել նաև տպագրիչները: Լույս է տեսել «Խորհրդային Ղարաբաղ» թերթի այսօրվա՝ հուլիսի 19-ի համարը:

Այսօրվանից վերականգնված են տեղական հեռուստատեսության հաղորդումները:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ